ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2020 թվականի հուլիսի 16-ին, սակայն կիրառման ընթացքում ի հայտ են եկել որոշ կարգավորումներ վերանայելու, ինչպես նաև նոր կարգավորումներ նախատեսելու անհրաժեշտություն, մասնավորապես.

- Գործող օրենքի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը վերահսկում է տեսալսողական հաղորդումների տեխնիկական չափանիշների համապատասխանությունը Կառավարության որոշմամբ սահմանված ստանդարտներին, սակայն հարկ է նշել, որ Կառավարությունը չի կարող սահմանել ստանդարտներ:

Միաժամանակ, դեռևս 2021 թվականին, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ուսումնասիրությունների արդյունքում ընտրվել էր «ГОСТ Р 58912-2020» (Телевидение вещательное цифровое. система эфирного наземного цифрового телевизионного вещания второго поколения DVB-T2) ՌԴ ազգային ստանդարտը, որը Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնելու և գործողության մեջ դնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը դիմել էր Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերություն:

Արդյունքում, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2021 թվականի սեպտեմբերի 28-ի N 134-Ն հրամանով՝ ազգային ստանդարտի կարգավիճակով ընդունվել և 2021թ-ի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել

Հայաստանի Հանրապետությունում: Ուստի անհրաժեշտ է խմբագրել և նշված գործառույթը վերապահել Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնին: Միաժամանակ, նշված փոփոխությունը միտված է նաև ապահովելու Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի նոյեմբերի 24-ի «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1268-Ա որոշման հավելվածի 2-րդ կետի կատարումը:

- Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին հայտնում է այդ ծրագիրը հեռարձակող մուլտիպլեքս օպերատորներին՝ հեռարձակումը անհապաղ դադարեցնելու համար:

Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ Կարգավորող պետական մարմնին վերապահվում է նոր գործառույթ՝ վերը նշվածի մասին հայտնել նաև այդ ծրագիրը հեռարձակող ցանցային օպերատորին:

- Նախագծով առաջարկվում է հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու հայտին կցել նաև տեղեկանք՝ հեռարձակման ծառայությունների մասով ժամկետանց պարտքեր և պարտավորություններ չունենալու մասին:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումներով հեռարձակողները հեռարձակման ծառայությունների մասով ունենալով ժամկետանց պարտքեր նորից մասնակցում են սլոթի լիցենզավորման մրցույթին, ստանում սլոթի օգտագործման լիցենզիա և շարունակում կուտակել նոր պարտքեր: Հանրային մուլտիպլեքսը շահագործողը ստիպված է լինում ծախսել լրացուցիչ միջոցներ, ժամանակ և ռեսուրսներ՝ դատական կարգով վերը նշված պարտքերը հավաքագրելու ուղղությամբ: Ուստի, Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվող փոփոխության նպատակն է,

որպեսզի հեռարձակողները սլոթի օգտագործման նոր մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելուց առաջ մարեն նախկինում հեռարձակման ծառայությունների մասով կուտակած իրենց պարտքերը:

- Գործող օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝ Հեռարձակողի տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, որի հետևանքով վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը, արգելքներ են ստեղծվում այլ Հեռարձակողների և օպերատորների գործունեության համար, չի ապահովվում տեսալսողական հաղորդումների տեխնիկական որակը:

Հարկ է նշել, որ եթե Հեռարձակողի կամ օպերատորի տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, ապա տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ կարող են վտանգ առաջացնել ինչպես մարդկանց առողջությանը, այնպես էլ՝ տեխնիկական խոչընդոտներ ստեղծել այլ Հեռարձակողների և օպերատորների, Հայաստանի Հանրապետությունում օրինական գործող ռադիոհաճախականություններ օգտագործող այլ սուբյեկտների գործունեության համար:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրների արդյունքում Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվում է խմբագրել 58-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետը, միաժամանակ նշված պահանջը տարածել նաև օպերատորների կողմից օգտագործվող տեխնիկական միջոցների վրա:

- «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝ խախտվել են օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:

Նախագծով առաջարկվում է լրացնել Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցման պայման, եթե՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական ծրագրի կամ տեսալսողական հաղորդման գործողության կասեցված լինելու պայմաններում Հեռարձակողի կողմից իրականացվել է տեսալսողական հաղորդումների հեռարձակում:

Նշված կարգավորմամբ, եթե Հեռարձակողը՝ տեսալսողական ծրագրի կամ տեսալսողական հաղորդման գործողության կասեցված լինելու ժամանակահատվածում (մինչև 30 օր) իրականացրել է տեսալսողական հաղորդումների հեռարձակում, ապա վերջինիս Հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է:

2. Առաջարկվող կարգավորումների բնույթ

Նախագծով առաջարկվում է Օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Վերանայվել է Կարգավորող մարմնին վերաբերող գործառույթը, որը վերաբերում է տեսալսողական հաղորդումների տեխնիկական չափանիշների համապատասխանության վերահսկմանը:#

2) Կարգավորող պետական մարմինը Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին հայտնում է այդ ծրագիրը հեռարձակող ինչպես մուլտիպլեքս, այնպես էլ ցանցային օպերատորներին՝ հեռարձակումը անհապաղ դադարեցնելու համար:#

3) Ավելացվել է նոր պահանջ՝ հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու հայտի ներկայացմանը, մասնավորապես՝ առաջարկվում է հայտին կցել նաև տեղեկանք՝ հեռարձակման ծառայությունների մասով ժամկետնանց պարտքեր և պարտավորություններ չունենալու մասին:

4) Վերանայվել է հեղինակազորման և լիցենզիայի գործողության կասեցման և դադարեցման պայմանները, մասնավորապես առաջարկվող փոփոխությամբ

հեղինակազորման և լիցենզիայի կասեցման պայման կարող է հանդիսանալ նաև համապատասխան ընդունված ստանդարտներին չհամապատասխանող տեխնիկական միջոցներով Հեռարձակողի կամ օպերատորի գործունեությունը, որը կարող է տեխնիկական խոչընդոտներ ստեղծել Հայաստանի Հանրապետությունում օրինական գործող ռադիոհաճախականություններ օգտագործող այլ սուբյեկտների գործունեության համար:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծով առաջարկվող կարգավորման արդյունքում գործնականում կբացառվեն տարընկալումները և կապահովվի իրավական որոշակիության սկզբունքը:

4 Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծի ընդունումն անմիջականորեն չի բխում 2050 Հայաստանի վերափոխման ռազմավարությունից, ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից»: